ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

___Օտար լեզուների և գրականության____
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Թ.Վ.Թադևոսյան_____

/Ա.Ա.Հ/

Արձանագրություն №16

«13» «05» 2024թ.

ՕԼԳ/բ-069___Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Օտար լեզուների և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ հեռակա
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ Հեռակա 3-րդ կուրս 6-րդ կիսամյակ

Դասախոս(ներ)՝ Աննա Պապոյան մ.գ.թ., դոցենտ
/անուն, ազգանուն/

Էլ. հասցեն՝ annapapoyan@yandex.ru

Վանաձոր - 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում .................................... 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները ................................................ 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները .................................................. 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները ........................................ ...
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների ........................................................ ...
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ...................................................... ...
7. Ուսումնական աշխատանքները տեսակները ........................................ ...
8. Դասավանդման մեթոդներ.............................................................. ...
9. Ուսումնառության մեթոդները ......................................................... ...
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը ........................................................................................ ...
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....................
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ........................................... ...
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ ...
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ................................................... ...
    - 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.................................................................................... ...
    - 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ .......... ...
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում..................... ...
14. Գնահատում.................................................................................. ...
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում..................................... ...
    - 14.2. Հարցաշար.......................................................................... ...
    - 14.3. Գնահատման չափանիշներ.................................................... ...
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ.................................................... ...

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացը կարևորվում է անգլերեն լեզվի դասավանդման բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 023102.02.6 «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

Դասընթացի նպատակն է

- Ծանոթացնել առարկայի հիմնական դրույթներին:
- Անգլերեն լեզվի դասավանդման օրինաչափություններին և սկզբունքներին:
- Լուսաբանել անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկայի դերն ու նշանակությունը օտար լեզուների ուսուցման ժամանակակից գիտությունների հարացույցում:
- Համակարգված պատկերացում կազմել լեզվի ուսուցման և յուրացման գործընթացների, դասընթացում ձեռք բերած մեթոդական հմտությունները դասապրոցեսում կիրառելու մասին:

Դասընթացի խնդիրներն են

- Սովորեցնել առարկայի տեսական հիմքերը:
- Բացատրել առարկայի դրույթների, սկզբունքների, ռազմավարության օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով, ինչպես նաև արատադրական պրակտիկայի շրջանակներում:
- Սովորեցնել ուսանողներին կատարել գիտական հետազոտություններ առջադրված թեմաների շրջանակնենում և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել անգլերեն լեզվի դասավանդման առանձնահատկությունները գործնական առաջադրանքների, նախագծերի համատեքստում:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/

«Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների տեսական գիտելիքների, մասնագիտական հմտությունների առկայությունը

<u>կամ</u>

«Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը 023102.02.6 «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Լեզվաբանության հիմունքներ», «Անգլերեն լեզու», «Հոգեբանություն», «Ընդհանուր մանկավարժություն» դասընթացներից:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

կոմպետենցիաները.

«Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա անգլերեն լեզվի դասավանդման տեսական հիմունքները,
2. իմանա առարկայի ուսումնասիրման մեթոդական հիմքները
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի դասավանդման ժամանակակից մեթոդներին,
5. կարողանա կատարել ինքնուրույն եզրակացություններ, համեմատություններ,
6. կարողանա ուսումնասիրության շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ2 հենքային և ընդհանուր գիտելիքներ,

ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,

ԳԿ8 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն):

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,

ՀԳԿ3 սովորելու ունակություն,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

ԱԿ11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

ԱԿ14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

## 5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է

«Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել անգլերեն լեզվի դասավանդման մասնագիտական գործունեության ընթացքում, դասապատրաստումներ իրականացնելու, մանկավարժական կրթությունը շարունակելու և կրթական բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | |
| Աշխատանքի տեսակը | Ժամաքանակ |
| Դասախոսություն | 6 |
| Գործնական աշխատանք | 10 |
| Սեմինար պարապմունք | |
| Լաբորատոր աշխատանք | |
| Ինքնուրույն աշխատանք | |
| Ընդամենը | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | |

7. Ուսումնական աշխատանքների տեսակները[4] .

- Դասախոսությունը դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

---

շրջանավարտը կիրառել

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- Սեմինար պարապմունքները խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- Լաբորատոր աշխատանքները նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսւթյուն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

  Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն
- Ինքնուրույն աշխատանքը ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - <u>Ռեֆերատ</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - <u>Գործարար խաղեր</u> – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:

- Էսսե – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- Կլոր սեղան – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- Կոնկրետ իրավիճակների վերլուծություն – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- Նախագծերի մեթոդ – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- Հարցի նախապատրաստման մոդել –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- Ինքնուրույն աշխատանք համացանցում – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- Աշխատանքային տետր – նախատեսված է ուսանողների ինքնուրույնաշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- Զեկույց – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- Հարցազրույց – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. Դասավանդման մեթոդներնեն են՝[6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, թեմատիկ սեմինար, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր….

9. Ուսումնառության մեթոդներն են[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում….

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական | լաբորատոր | ինքնուրույն |
| 1. | ԱԼԴՄ որպես առանձին գիտություն. Կապը հարակից գիտությունների հետ. Առարկայի բովանդակությունը, նպատակը, սկզբունքները | 1 | | 1 | | |
| 2. | Ուսուցման ավանդական մեթոդները. Ուսուցման ժամանակակից մեթոդները. Թվային տեխնոլոգիաների դերը ուսուցման մեջ | 1 | | 1 | | |
| 3. | Արտասանության ուսուցում. Ունկդրման ուսուցում | 1 | | 1 | | |
| 4. | Խոսելու կարողությունների ուսուցում. Հաշորդակցական վարժությունների տեսակները | 1 | | 1 | | |
| 5. | Քերականության ուսուցում. Քերականական կառույցների և մոտեցումների ուսուցում. | 0.5 | | 1 | | |
| 6. | Գրավոր հմտությունների ուսուցում. Տեսակները. Էսսեներ, շարադրություններ գրելու հմտությունների ձևավորում | 0.5 | | 1 | | |

[8] Նման է օրացուցային պլանին

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Ընթերցանության ուսուցում. Ընթերցանության տեսակները. Տնային ընթերցանության առանձնահատկությունները | 0.5 | | 1 | | |
| 8. | Բառապաշարի ուսուցում | | | 1 | | |
| 9. | Գնահատում, ձևավորող գնահատում, ամփոփիչ գնահատում | 0.5 | | 1 | | |
| 10. | Համագործակցային ուսումնառություն | | | 1 | | |
| 11. | Օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները տարբեր տարիքային խմբերում | | | | | |
| 12. | Դասի պլանավորում. Տեսակները | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 6 | | 10 | | |

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
| 1. | M.E.S.Elizabeth “Methods of Teaching English” | 2010 |
| 2. | Larsen-Freeman “Techniques and Principles in Language Teaching” | 1986 |
| 3. | J..M.O’Malley “Authentic Assessment for English Language Learners” | 2001 |

| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
|---|---|---|
| 1. | Ս.Վարդումյան, Ն.Ջաղինըան, Լ.Հարությունյան “Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում’ | 2003 |
| 2. | T.Hutchinson, A.Waters “English for specific purposes. A learning-centered approach” | 1993 |
| Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ) | | |
| 1. | | |
| 2. | | |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|
| 1. | ԱԼԴՄ որպես առանձին գիտություն. Կապը հարակից գիտությունների հետ. Առարկայի բովանդակությունը, նպատակը, սկզբունքները | Ընդհանուր/հատուկ ԱԼԴՄ-ն որպես առանձին գիտություն, մանկավարժության, հոգեբանության, լեզվաբանության ազդեցությունը և կապը ԱԼԴՄ-ի հետ:<br><br>Առարկայի կրթական, գործնական, մշակութայի նպատակների համակարգը, առարկայի բովանդակության երեք բաղադրիչների բնույթը:<br><br>Սկզբունքների անհրաժեշտությունը որոշակի գործնական հմտություն սովորեցնելու համար: | 1 | M.E.S.Elizabeth “Methods of Teaching Englis”,2010<br><br>Larsen-Freeman “Techniques and Principles in Language Teaching”,1986<br><br>J..M.O’Malley “Authentic Assessment for English Language Learners”,2001<br><br>Ս.Վարդումյան, Ն.Ջաղինըան, Լ.Հարությունյան “Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տեսություններ, մեթոդներ, գնահատում’,2003<br><br>T.Hutchinson,A.Waters “English for specific purposes. A learning-centered approach”1993 |
| 2. | Ուսուցման ավանդական մեթոդները. Ուսուցման ժամանակակից մեթոդները. Թվային տեխնոլոգիաների դերը ուսուցման մեջ | Դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդների ծագումնաբանությունը: Պատմական ակնարկ:<br><br>Թվային տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունը ուսուցման վրա: Համաճարակների պայմաններում թվային և ավանդական մեթոդների հարաբերակցությունը: | 1 | |
| 3. | Արտասանության ուսուցում. Ունկդրման ուսուցում | Արտասանության ուսուցման առանձնահատկությունները և դժվարությունները օտարեկրացիների շրջանում: Ունկնդրել ուսուցանելու հիմնական ռազմավարությունը: Տեսակները, վարժությունները: | 1 | |
| 4 | Խոսելու կարողությունների ուսուցում. Հացորդակցական վարժությունների տեսակները | Լեզվական գործառույթները, խոսքի հոգեբանական և լեզվական բնութագրերը: Հաղորդակցման վարժությունների դերը և նծանակությունը լեզվի ուսուցման, գործնական կիրառման  համար:<br><br>Լեզվի գործառույթները: Հաղորդակցական գործունեություն: Խոսքի տեսակները, | 1 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | լեզվաոճաբանական բնութագիրը: Բանավոր վարժությունների համակարգը: | | |
| 5 | Ընթերցանության ուսուցում. Ընթերցանության տեսակները. Տնային ընթերցանության առանձնահատկությունները | Անգլերեն լեզվով ընթերցանության դասավանդման առանձնահատկությունները, տառերի և հնչյունների համակարգերի բնութագիրը, դրանց հետ կապված դժվարությունների ուսումնասիրությունը և առավել դյուրին բացատրելու, սովորեցնելու սկզբունքները:<br><br>Ինչ տիպի ընթերցանություն պետք է սովորեցնել հենց սկզբից, ինչպիսի տեսակներ գոյություն ունեն, ինչպես տարբեր տարիքում զարգացնել կարդալու հմտություններ: Տնային ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները: | 1 | |
| 6. | Գնահատում, ձևավորող գնահատում, ամփոփիչ գնահատում | Տարբերակել թեստավորումը և գնահատումը, գնահատման ավանդական և ժամանակակից տեսակները:<br><br>Ի՞նչ է հավաստի գնահատումը, ինչպես ստուգել և գնահատել գիտելիքները, տարբեր լեզվական հմտությունները, երբ և ինչ թեստ պետք է տալ կոնկրետ գիտելիք, թեմա ստուգելու համար: | 0.5 | |
| 7. | Դասի պլանավորում. Տեսակները | Պլանավորումը որպես դասավանդման, ուսուցման կարևորագույն տարր: Պլանավորման տեսակները: Դասի պլան, օրվա պլան, տարվա պլան եզրույթների մեկնաբանությունը, բաղադրիչների նկարագիրը: | 0.5 | |

Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Ստուգման ձևը | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԱԼԴՄ որպես առանձին գիտություն. Կապը հարակից գիտությունների հետ. Առարկայի բովանդակությունը, նպատակը, սկզբունքները | Ընդհանուր/հատուկ ԱԼԴՄ-ն որպես առանձին գիտություն, մանկավարժության, հոգեբանության, լեզվաբանության ազդեցությունը և կապը ԱԼԴՄ-ի հետ: Առարկայի կրթական, գործնական, մշակութայի նպատակների համակարգը, առարկայի բովանդակության երեք բաղադրիչների բնույթը: Սկզբունքների անհրաժեշտությունը որոշակի գործնական հմտություն սովորեցնելու համար: | 1 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | M.E.S.Elizabeth “Methods of Teaching Englis”,2010<br>Larsen-Freeman “Techniques and Principles in Language Teaching”,1986<br>J..M.O’Malley “Authentic Assessment for English Language Learners”,2001<br>Ս.Վարդումյան, Ն.Զաղինըան, Լ.Հարությունյան “Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում’,2003<br>T.Hutchinson,A.Waters “English for specific |

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | purposes. A learning-centered approach"1993 |
| 2. | Ուսուցման ավանդական մեթոդները. Ուսուցման ժամանակակից մեթոդները. Թվային տեխնոլոգիաների դերը ուսուցման մեջ | Դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդների ծագումնաբանությունը: Պատմական ակնարկ: Թվային տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունը ուսուցման վրա: Համաճարակների պայմաններում թվային և ավանդական մեթոդների հարաբերակցությունը: | 1 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |
| 3. | Արտասանության ուսուցում. Ունկդրման ուսուցում | Արտասանության ուսուցման առանձնահատկությունները և դժվարությունները օտարեկրացիների շրջանում: Ունկնդրել ուսուցանելու հիմնական ռազմավարությունը: Տեսակները, վարժությունները: | 1 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |
| 4. | Խոսելու կարողությունների ուսուցում. Հացորդակցական վարժությունների տեսակները | Լեզվական գործառույթները, խոսքի հոգեբանական և լեզվական բնութագրերը: Հաղորդակցման վարժությունների դերը և նշանակությունը լեզվի ուսուցման, գործնական կիրառման համար: Լեզվի գործառույթները: Հաղորդակցական գործունեություն: Խոսքի տեսակները, լեզվահոգեբանական բնութագիրը: Բանավոր վարժությունների | 1 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | համակարգը: | | | |
| 5. | Քերականության ուսուցում. Քերականական կառույցների և մոտեցումների ուսուցում. | Քերականության դասավանդման ընդհանուր մոտեցումները, դասավանդման առանձնահատկությունները և քերականական կառուցվածքի յուրացումը:<br><br>Քերականության, ուսուցման գիտակցված, գործնական, կառուցվածքային, իրավիճակային մոտեցումները: Քերականության յուրացման համար անհրաժեշտ վարժությունների համակարգը: | 1 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |
| 6. | Գրավոր հմտությունների ուսուցում. Տեսակները. Էսսեներ, շարադրություններ գրելու հմտությունների ձևավորում | Վայելչագրություն: Անգլերենի ուղղագրության ընդհանուր կանոններն ու բացառությունները: Թելադրությունների տեսակները, թելադրության տեխնիկան: Գրավոր խոսքը զարգացնելու առանձնահատկությունները, դասավանդման յուրահատկությունները: Անգլերեն լեզվով գրելու հմտությունների զարգացման հիմնական սկզբունքները, գրելու ուսուցումը որպես անուղղակի հաղորդակցման ձև. | 1 | | |
| 7. | Բառապաշարի ուսուցում | Բառերի դասակարգումը ըստ | 1 | Թեստեր, իրավիճակային | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | դրանց հաճախականության,համատեքստի կարևորության, բառապաշարի ներկայացման և յուրացման վարժությունների տեսակների.<br><br>Բառի հաճախականությունը. Անգլերենի բառապաշարի ներկայացում և համախմբում. Վարժությունների տեսակները և՛ բառապաշարը ներկայացնելու, և՛յուրացնելու համար: | | վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |
| 8. | Գնահատում, ձևավորող գնահատում, ամփոփիչ գնահատում | Թեստավորման և գնահատման սահմանումը, գնահատման ավանդական և ժամանակակից տեսակների մասին:<br><br>Հավաստի գնահատման բնույթը: Գնահատման տեսակները: Ուսումնառության թղթապանակները, ռուբրիկները՝ որպես գնահատման գործիք: | 1 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |
| 9. | Համագործակցային ուսումնառություն | Համագործակցային ուսումնառություն ծագումը և սկզբունքները, դրա իրականացման ռազմավարությունները, քայլերը և մակարդակները:<br><br>Համագործակցային ուսումնառություն առավել արդյունավետ վարժությունների ուսումնասիրությունը, Կագանի | 1 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կառուցվածքների կիրառումը ԱԼԴՄ-ում: | | | |
| 10. | Օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները տարբեր տարիքային խմբերում | Ոչ մի ուսուցում հնարավոր չէ առանց տարիքային առանձնահատկությունների մասին գիտելիքի: Յուրաքանչյուր տարիքի բնութագիրը, առանձնահատկությունները: Ի՞նչ գործոններ են բնութագրում որոշակի փուլը:<br><br>ԱԴՄ-ի կրտսեր, միջին և ավագ փուլերը, դրանց բնույթն ու բնութագրերը: | | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |
| 11. | Ընթերցանության ուսուցում. Ընթերցանության տեսակները. Տնային ընթերցանության առանձնահատկությունները | Անգլերեն լեզվով ընթերցանության դասավանդման առանձնահատկությունները, տառերի և հնչյունների համակարգերի բնութագիրը, դրանց հետ կապված դժվարությունների ուսումնասիրությունը և առավել դյուրին բացատրելու, սովորեցնելու սկզբունքները:<br><br>Ինչ տիպի ընթերցանություն պետք է սովորեցնել հենց սկզբից, ինչպիսի տեսակներ գոյություն ունեն, ինչպես տարբեր տարիքում զարգացնել կարդալու հմտություններ: Տնային ընթերցանության ուսուցման | 0.5 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | առանձնահատկությունները: | | | |
| 12. | Դասի պլանավորում. Տեսակները | Պլանավորումը որպես դասավանդման, ուսուցման կարևորագույն տարր: Պլանավորման տեսակները: Դասի պլան, օրվա պլան, տարվա պլան եզրույթների մեկնաբանությունը, բաղադրիչների նկարագիրը: | 0.5 | Թեստեր, իրավիճակային վերլուծություններ, գործարար խաղեր, խմբային աշխատանքներ, տնային առաջադրանքներ, ինտերակտիվ | |

Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող Հարցեր | Ժամաքանակ | Ստուգման ձևը | Գրականություն[11] |
|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | |
| 2. | | | | | |

Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

[11] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[12] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[13] |
|---|---|---|---|---|---|---|
| Ծշփթէ՝ 1. | Բառապաշարի հարստացումը լեքսիկական խաղերի միջոցով: | Լեքսիկական/լեզվական խաղերի դերը, տեղը բառապաշարի հարստացման գործընթացում: Խաղերի տեսակները, առանձնահատկությունները | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | Համացանցային տեղեկատվական պաշարներ |
| 2. | Համացանցային ռեսուրսների միջոցով սովորողների հաղորդակցման կարողությունների ձևավորումը | Համացանցի, դրանում առկա ռեսուրսների դերը, ընտրությունը հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում | Կիսամյակի ընթացքում | | |

[12] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[13] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Խաղերի դերը անգլերենի դասերին: | Գործնական, հաղորդակցական, սոցիալական հմտությունների և կարողությունների զարգացման համար անհրաժեշտ խաղերի տեսակները, դրանց կազմակերպումը և կիրառումը դասապրոցեսում | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |
| 4. | Օտար լեզուների դասավանդման նորարարությունները | Կրթական համակարգում նորարարական միտումները, թվային տեխնոլոգիաների դերը օտար լեզուների դասավանդման մեջ | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |
| 5. | Համակցված ուսուցում/ուսումնառություն | Համակցված ուսուցումը ավանդական ուսուցման ը համեմատ, արդյունավետությունը, թերությունները | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | Շրջված լսարան մեթոդի գաղափարը | Շրջված լսարանը որպես նորարարություն: Շրջված լսարանի կիրառումը համաճարակի պայմաններում | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |
| 7. | Լեզվի ուսուցման բովանդակության ճիշտ ընտրության խնդիրը | Ուսուցման բովանդակության տարրերը, փոխկապակցվածությունը, ընտրության ճիշտ կազմակերպումը | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |
| 8. | Ուսումնական միջավայրի ազդեցությունը ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների և մոտիվացիայի վրա: | Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների վրա ազդող գործոնների նկարագիրը, ուսումնական միջավայրի դերը աշակերտների մոտիվացիի խթանման համար | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Քերականության դասավանդման ինտեգրված մոտեցումը | Ինտեգրված մոտեցման սահմանումը: Ինտեգրված մոտեցման արդյունավետությունը քերականության դասավանդման մեջ | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |
| 10. | Անգլերենի դասավանդման մեջ հետադարձ կապի կարևորությունը: | Հետադարձ կապի սահմանումը, բնութագիրը, տեսակները: Հետադարձ կապի որպես խթանող բաղադրիչի անհրաժեշտությունը դասապրոցեսում | | ▪ Ռեֆերատ<br>▪ Գործարար խաղեր –<br>▪ Կլոր սեղան –<br>▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն –<br>▪ Նախագծերի մեթոդ<br>▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում<br>▪ Զեկույց | Կիսամյակի ընթացքում | | |

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[14]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | |
| Համակարգչային ծրագրեր | |

[14] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

| | |
|---|---|
| UJL | |

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[15]:

Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

Ուսանողների գիտելիքների ստուգում**.**

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով/քննությունով:

---

[15]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

Հարցաշար (ըստ ծրագրի)

1. ԱԼԴՄ որպես առանձին գիտություն. Կապը հարակից գիտությունների հետ. Առարկայի բովանդակությունը, նպատակը, սկզբունքները
2. Ուսուցման ավանդական մեթոդները. Ուսուցման ժամանակակից մեթոդները. Թվային տեխնոլոգիաների դերը ուսուցման մեջ
3. Արտասանության ուսուցում. Ունկդրման ուսուցում
4. Խոսելու կարողությունների ուսուցում. Հացորդակցական վարժությունների տեսակները
5. Գրավոր հմտությունների ուսուցում. Տեսակները. Էսսեներ, շարադրություններ գրելու հմտությունների ձևավորում
6. Քերականության ուսուցում. Քերականական կառույցների և մոտեցումների ուսուցում.
7. Բառապաշարի ուսուցում
8. Ընթերցանության ուսուցում. Ընթերցանության տեսակները. Տնային ընթերցանության առանձնահատկությունները
9. Գնահատում, ձևավորող գնահատում, ամփոփիչ գնահատում
10. Համագործակցային ուսումնառություն
11. Օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները տարբեր տարիքային խմբերում
12. Դասի պլանավորում. Տեսակները

[16] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի  որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ մանկավարժության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՕԼԳ/բ-069 -Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">3 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">3-րդ տարի, 6-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">16</td><td>Դասախոսություն</td><td>6</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>10</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">36</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">60</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Առարկայի ուսումնասիրությունը ներառում է ուսուցանվող լեզվի զարգացման հիմանական հեռանկարային ուղղությունները, պահանջվող ուսումնական նյութի յուրացման համար անհրաժեշտ մեթոդներն ու տեխնոլոգիաները, հմտություններին կարողությունների այն ծավալը և բովանդակությունը, որոնց պետք է տիրապետի ուսանողը որպես կրթության ակնկալվող վերջնարդյունք՝ գլխավորապես շեշտադրելով լեզվի որպես հաղոնղակցման միջոցի դերը և զարգացնելով ուսանողների հաղորդակցման իրազեկությունը:<br><br>§Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա¦՝ առարկան հանդիսանում է անգլերեն լեզուն ուսուցանող ապագա մանկավարժի պատրաստման հիմնական առանցքներից մեկը: Առարկայի նպատակն է հիմնական դրույթներին, ընդհանուր կառուցվածքին զուգահեռ պատկերացում տալ ժամանակակից մեթոդական հետազոտությունների, գիտական նորարարությունների և արդի</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | վերլուծությունների մասին: |
| Դասընթացի վերջնարդյունքները | Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br><br>• Գիտելիք<br>Ուսանողները պետք է ունենան որոշակի գիտելիքներ անգլերեն լեզվի դասավանդման արդի մեթոդների, սկզբունքների և տեխնոլոգիաների մասին, գնահատման համակարգում իրականացված բարեփոխումների մասին:<br><br>Հմտություն<br><br>• Լեզվի դասավանդմանայն հմտությունների ռազմավարությանը, որոնք համապատասխանում են ժամանակակից լեզուների դասավանդման համակարգի մակարդակին<br>• Դասընթացի ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններին<br><br>Կարողունակություն<br><br>• Կատարել ինքնուրույն եզրակացություններ, համեմատություններ, զուգահեռներ<br>• Ճիշտ կազմակերպել օտար լեզվի ուսուցման և յուրացման գործընթացը<br>• Դասընթացում ձեռք բերած մեթոդական հմտությունները կիրառել դասապրոցեսում, բանավոր և գրավոր խոսքում |
| Դասընթացի բովանդակությունը | Թեմա 1՝- ԱԼԴՄ որպես առանձին գիտություն. Կապը հարակից գիտությունների հետ. Առարկայի բովանդակությունը, նպատակը, սկզբունքները<br><br>Թեմա 2 – Ուսուցման ավանդական մեթոդները. Ուսուցման ժամանակակից մեթոդները. Թվային տեխնոլոգիաների դերը ուսուցման մեջ<br><br>Թեմա 3 – Արտասանության ուսուցում. Ունկդրման ուսուցում<br><br>Թեմա 4 – Խոսելու կարողությունների ուսուցում. Հացորդակցական վարժությունների տեսակները<br><br>Թեմա 5 – Քերականության ուսուցում. Քերականական կառույցների և մոտեցումների ուսուցում.<br><br>Թեմա 6 – Գրավոր հմտությունների ուսուցում. Տեսակները. Էսսեներ, շարադրություններ գրելու հմտությունների ձևավորում<br><br>Թեմա 7 – Ընթերցանության ուսուցում. Ընթերցանության տեսակները. Տնային ընթերցանության |

| | |
|---|---|
| | առանձնահատկությունները<br><br>Թեմա 8- Բառապաշարի ուսուցում<br><br>Թեմա 9- Գնահատում, ձևավորող գնահատում, ամփոփիչ գնահատում<br><br>Թեմա 10- Համագործակցային ուսումնառություն<br><br>Թեմա 11 -Օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները<br><br>տարբեր տարիքային խմբերում<br><br>Թեմա 12 – Դասի պլանավորում. Տեսակները |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | Մասնակցությունը դասընթացին (ընդհանուր գնահատականի 20 %-ը կամ 20 միավոր)<br><br>Գնահատման մեթոդը՝<br><br>- Հաճախումների հաշվառում<br><br>Գնահատման չափանիշըª<br><br>- ներկայություն<br><br>2. Մասնակցությունը գործնական աշխատանքներին (ընդհանուր գնահատականի 20 %-ը կամ 20 միավոր)<br><br>Գնահատման մեթոդը՝<br><br>- մասնակցությունը լսարանային քննարկումներին<br><br>- բանավոր հարցման արդյունքների հաշվառում<br><br>3. Ինքնուրույն աշխատանքներ (ընդհանուր գնահատականի 10 %-ը կամ 10 միավոր)<br><br>Գնահատման մեթոդը՝<br><br>- Առցանց թեստային աշխատանքներ<br>- PowerPoint պրեզենտացիաներ<br>- Դիտարկվող նյութի մասնագիտական վերլուծության ներկայացման որակ,<br><br>4. Գործնական հմտություններ (ընդհանուր գնահատականի 10 %-ը կամ 10 միավոր)<br><br>Գնահատման մեթոդը՝ |

| | |
|---|---|
| | - Միավորը տրվում է ուսանողին գործնական հանձնարարություններից դրական գնահատական ստանալու դեպքում: |
| Գրականություն | Պարտադիր-M.E.S.Elizabeth “Methods of Teaching Englis”,2010<br><br>Larsen-Freeman “Techniques and Principles in Language Teaching”,1986<br><br>J..M.O’Malley “Authentic Assessment for English Language Learners”,2001<br><br>Լրացուցիչ- Ս.Վարդումյան, Ն.Ջաղինըան, Լ.Հարությունյան “Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում’,2003<br><br>T.Hutchinson,A.Waters “English for specific purposes. A learning-centered approach”1993 |